

ԲԺ. Մ. Ի. ՆԵՅՇՏԱՂԻՏ



ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ
ԼՈՒԾԵՐԸ ՅԵՎ ՊԱՅԳԱՐԸ
ՆՐԱՆՑ ԴԵՄ

ՀԱՅՊԵՏՆՐԱՏ

ԲԺ. Մ. Ի. ՆԵՅՇՏԼԻՏ

616.34-053.2

Գ—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒԻՏԻՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԼՈՒԻՏԻՆԻ

ՄԱՐԿԱԿԱՆ

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՒԻՏԻՆԻ
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Թարգմ. Ավ. Շաքիրյան



ՀԱՅԿԵՏՆԻՐԱՅ

ՅԵՐԵՎԱՆ

1940

514
1715
A

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՒԾԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ամառային լուծերը անեղ չարիք են փոքրահասակ, մտնա-
վանդ ծծկեր յերեխաների համար: Ամառնը շատ յերեխաներ
են մահանում լուծերից: Մանուկների մահացության տեսակե-
տից ցարական Ռուսաստանն առաջին տեղն էր գրավում: Ծըն-
ված յուրաքանչյուր 100 յերեխայից 26-ը մեռնում էր, չապրե-
լով մինչև մեկ տարեկան հասակը: Յերեխաները մահանում է-
ին գլխավորապես ստամոքս-աղիքային հիվանդություններից: Թե
լուծերից ինչքան շատ յերեխա յեր մահանում, յերևում է նրա-
նից, վոր դանադան հիվանդություններից մահացած յուրաքան-
չյուր 1000 յերեխայից կեսը լուծերից էր մահանում:

Ձեռք էր առնվում արդյոք վորևե միջոց այդ զարհուրելի
մահացության դեմ:

Վհչ: Յարական կառավարությունն այդ խայտառակ փառ-
տի կողքով էր անցնում, բուրժուազիային շատ քիչ էր վշտաց-
նում բանվորների և գյուղացիների զավակների որ ավուր աճող
գերեզմանների թիվը: Ամենից շատ յերեխանք մեռնում էին
գյուղում, վորտեղ գլխավոր բժիշկը տատմբին էր իր հոչակա-
վոր ծամած հացով: Այդ ծամած հացը հարյուր հազարավոր փոքրիկ
կյանքեր է գերեզման տարել: Սակայն քաղաքում ապրող մայ-
րը ևս այն ժամանակ հեռու չէր գնում զեղջկուհուց: Շատ նախապա-
շարմունքներ կային փոքրահասակ յերեխաներին դառտիարակելու
և կերակրելու մեջ, շատ նախապաշարմունքներ էին կապված ստա-
մոքս-աղիքային հիվանդությունների պատկերացման հետ: Կանանց
մեծ մասը, ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում, իրենց
անգիտության և սգիտության պատճառով ժամանակից շուտ էին
զաղարում կրծքով կերակրելուց յերեխային, մանկանը տալիս
էին կովի կաթ, շիլա, ծամած սև հաց:

Հոգատարությունը փոքրահասակ յերեխաների նկատմամբ
իր ամբողջ ծավալով ոկավից միայն Հոկտեմբերյան հեղափոխու-

թյան հետ: Խորհրդային իշխանությունն ստեղծեց մոր ու ման-
կան պետական պահպանություն և ներկայումս մենք տարեց-
տարի ել ավելի մեծ նվաճումներ ենք ունենում մահուկների
մահացության դեմ մղվող պայքարում: Ավելանում և մսուրների,
կոնսուլտացիաների, ծննդատների և ծննդաբերական բաժան-
մունքների թիվը յաղաքում և գյուղում, տարեց-տարի ել ա-
վելի կուլտուրական և դառնում բանվորուհին ու կոլտնտեսուհին
և այդ բոլորը նվազեցնում և մանուկների մահացության թիվը:
Վերջան ավելի կազմակերպված և դառնում մեր կյանքը, վո-
րջան շատ և լայնանում մսուրների, կոնսուլտացիաների, ծնն-
դատների ցանցը, այնքան ավելի քիչ են մեռնում փոքրահա-
տակ յերեխաները: Ներկայումս ԽՍՀՄ-ում խիստ պակասել և
մանուկների հիվանդացումն ու մահացումը, օակայն այդ իջեցու-
մը դեռ մեզ չպետք և հանդատացնի:

Խորհրդային իշխանությունը և բուլեդների կուսակցու-
թյունը մեզ մոտ յերջանիկ կյանք են ստեղծել, վորտեղ կարելի
յ և հանգիստ լինել իր յերեխայի վիճակի համար. այդ կյանքը
տալիս և բոլոր հնարավորությունները՝ ճանաչելու յերջանիկ
մայրության և հայրության ուրախությունը, նա թույլ և տալիս
զգալիորեն ավելայնել մեր հայրենիքի բնակչության թիվը և
դրանով իսկ ել ավելի ուժեղացնել նրա հզորությունը:

Արագորեն աճում և ծննդաբերությունը մեր յերկրում, և
այդ բանն ել ավելի յ պարտավորեցնում մեզ ամենայն վճա-
կանությամբ, ամենայն յեռանդով պայքարել փոքրահատակ յե-
րեխաների կյանքն ու առողջությունը պահպանելու համար:

ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ԻՆՁԻՑ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԼՈՒԾՈՎ

Փոքրահատակ յերեխաների յուծ առաջացնող պատճառները
քաղմազան են: Փոքրահատակ, մանավանդ ծնկեր յերեխայի ստա-
մոքսը ևս փոքր և, դրա համար ել այդպիսի ստամոքսը չափից
ավելի շատ ուտելիքով ծանրաբեռնելը, նույնիսկ յեթե նա
թարմ և և լավորակ, փախոց և առաջացնում: Վեց ամսական
ծնկեր յերեխային կերակրելու համար հարկավոր և 180 գրամ
կաթ (մոտ մի բաժակ), իսկ յեթե նրան տանք 300 գրամ, ա-
յինքն մոտ բաժակ ու կես, նա կաող և լուծով հիվանդանալ:
Յերբեմն առողջ յերեխան վորոշ ժամանակ տանում և կերածի ավել-
յուկը, բայց հետո կերածը կանգ և առնում ստամոքսում, ուտեց-

նում ե այն, գրգռում նրա պատերը, չափից ավելի յեն լարվում ստամոքսն ու աղիքները և յերեխան հիվանդանում ե լուծով։ Միանման ֆլաթ ե ինչպես շատ, տյնպես ել չափազանց հաճախ կերակրելը։ Սա լուծ երի պատճառներից մեկն ե։

Մյուս պատճառը յերեխայի անհամապատասխան սնունդն ե։ Առհնից առողջ սնունդը յերեխայի համար իր մոր կաթն ե։ Վոչ մի բան չի կարող փոխարինել նրան։ Յերեխայի համար բոլոր ոգտակար ու հարկավոր նյութերը գտնվում են մայրական կաթի մեջ։ Այնուամենայնիվ շատ հաճախ այս բանը չեն գնահատում, չեն հասկանում։ Մեկ ել տեսար՝ մորը թվաց, թե իր յերեխան քաղցած ե և նա իր մեկ ամսական, իսկ յերբեմն ել յերկու շաբաթական յերեխային շիա յե տալիս։ Յերբեմն առանց խորհրդակցելու բժշկի հետ յերեխայի ուտելիքի մեջ վորեկ ավլուր են մտցնում։ Ծծկեր յերեխային ժամանակից շուտ շիա և ավլուր տալը ֆլաթ ե։ Այդպիսի սնունդն սկսում ե թթվել աղիքների մեջ և լուծ ե առաջացնում։

Ծամած հացի մասին խոսել անգամ չարժե։ Բարեբախտաբար այժմ սկսել են աշն ավելի քիչ գործադրել, բայց և այնպես ներկայումս ել յերբեմն վլուղերում ծկը յերեխաներն շորի մեջ փաթաթած ծամած սև հաց կամ շիա յեն տալիս։ Յերեխայի փրքիկ քնքույշ ստամոքսը և քնքույշ աղիքներն այդ սնունդին փսխոցով ու լուծով են պատասխանում։ Ավելի մեծահասակ, մեկ տարեկանից բարձր յերեխաների համար այդպիսի ֆլաթակար սնունդ ե յերշիկը, կոնսերվները, արևածաղիկը և այլն։

Լուծի յերբուրդ պատճառը — փչացած կամ քայքայված ուտելիքն ե։ Ուտելիքը սովորաբար փչանում կամ քայքայվում ե միկրոբների ազդեցության տակ։

Ինչ բան են միկրոբները, կամ, ինչպես ուրիշ խոսրով նրանց անվանում են,—բակտերիաները։ Դրանք մանրագույն կենդանի երակներ են, վորոնց կարելի յե տեսնել միայն մեծացնող ապակիներ ունեցող հատուկ գործիքի, այսպես կոչված, մանրադիտակի միջոցով։

Այդպիսի մանրադիտակով շատ հաճախ կաթի մեջ կտրելի յե հայտաբերել մեծ քանակութամբ ֆլաթակար բակտերիաներ։ առանձնապես շատ բակտերիաներ են լինում կաթնավաճառների կողմից շուկա բերված կաթի մեջ, վորովհետև նրանք չեն պահպանում հիգիենայի կանոնները՝ վատ են լվանում կաթի ամանները, բաց են պահում նրանց, չատկապես վտանգավոր ե, յերբ կաթի

կամ մի ուրիշ ուսանիչի մեջ լինում են դիզենտերիայի, տիֆի կամ հատուկ միկրոբներ, վորոնք փոխում են կաթի ամբողջ թաղադրութիւնը: Ամառվա շոգ ամիսներին կեղտոտված կաթը հաճախ լուծի պատճառ ե դառնում:

Ամռանը յերկաայի գերտաքացումը նույնպէս կարող ե լուծի պատճառ հանդիսանալ: Ամառվա շոգը նվազեցնում ե յերկաայի ուժերը: Նրա ստամոքսը ե աղիքներն սկսում են վատ աշխատել:

Վորպեսզի հասկանալի լինի, թե ստամոքսը ե աղիքներն ինչ աշխատանք են կատարում, հարկավոր ե մի քանի խոսք առել ադ մասին: Ուսանիքը բերանից անցնում ե վորկորի մեջ, վորը կոկորդը միացնում ե ստամոքսի հետ: Ուսանիքը վորկորի միջով անցնում ե ստամոքսը, իսկ ստամոքսից՝ աղիքները: Ստամոքսում ե աղիքներում արտադրվում են հատուկ հյութեր՝ ստամոքսային ե աղիքային հյութեր: Այդ հյութերի ազդեցութեան տակ ուսանիքը տարրալուծվում ե այնպիսի թաղադրիչ մասերի, վորոնք այնուհետե կարող են հեշտութեամբ ներծծել արյան մեջ: Իսկ արյունն որդանիղմում ամեն տեղ կա, նա հոսում ե արյունատար անոթների, կամ ինչպես ասում են, յերակների մեջ: Այդպիսի անոթները յերևում են ձեռների վրա, շատ նիհար մարդկանց պարանոցի վրա, քունքի վրա: Յերեացող յերակները հոնց անոթներն են:

Այդպիսի յերակներ, միայն բոլորովին փոքր ե շատ բարակ, անցնում են նաե ստամոքսի ու աղիքների պատերի մեջ: Ստամոքսի ե աղիքների հյութերով մանրացրած ե վերամշակած սնունդն անցնում ե այդ յերակների-անոթների մեջ ե տարածվում ամբողջ մարմնով: Իսկ սննդի մի մասը չի ներծծվում, նա հարկավոր չե որդանիղմին: Սննդի այդ մասն անցնում ե սկզբում բարակ, հետո հաստ աղիքների միջոցով ե այնուհետե վորպէս կղանք դուրս նետվում: Շոյի ե յերկաայի գերտաքացման ազդեցութեան տակ ստամոքսում ե աղիքներում հյութեր ավելի քիչ են արտադրվում, ստամոքսն սկսում ե ավելի վատ աշխատել: հետևապէս սնունդն ել ավելի վատ ե վերամշակվում:

Սա նշանակում ե արդյոք, թե խիստ շոգին յերկաայն անպայման պիտի հիվանդանա: Վոչ, կարելի չե ամենաստուգիկ շոգի ժամանակ ես այնպէս անել, վոր յերկաայն պաշտպանվի լուծից:

Մարմնի խիստ թառեցումը նույնպես կարող է փոքրահասակ յերեխաների մոտ սուր լուծ առաջացնել:

Բացի դրանից, նկատվում են շատ դեպքեր, յերբ լուծի վարակմանից մյուսին և անցնում: Այդ լուծի չորրորդ պատճառն է. Շատ հաճախ լուծով հիվանդացած չափահաս մարդիկ վարակում են փոքրահասակ յերեխաներին: Յերբնմ լուծ հիվանդությունը մի յերեխայից մյուսին և փոխանցվում, մանավանդապես դեպքերում, յերբ չի պահպանվում հիգիենայի և մաքրության հիմնական կանոնները: Հիվանդ յերեխային խնամելու ժամանակ մեծերը պետք է խնամքով լվանան իրենց ձեռները: Հիվանդ յերեխային պետք է առանձնացնել առողջներից: Լուծով հիվանդ յերեխաների բարուրաշորերը պետք է ժամանակին հալածել: Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, վոր առողջ յերեխայի աղբքների մեջ ևս մեծ քանակությամբ ամեն տեսակի միկրոբներ կան. նույնիսկ նորածին յերեխայի աղբքների մեջ, ծնվելուց 10-12 ժամ հետո արդեն միկրոբներ են լինում: Այդ միկրոբները նրան չեն փնտում, բայց բավական է միայն դերկերակրել կամ գերտաքացնել յերեխային արևի տակ, բավական է, վոր նա վորևե վոչ թարմ բան ուտի, վորպեսզի այդ միկրոբները, վորոնք առաջ անփնտս եյին, միանգամից փնտսակար դառնան: Նրանք խիստ բազմանում են, արտադրում են հատուկ փնտսակար նյութեր և նրանցով թունավորում որդանիզմը. սկսում է փախոց, բուծ, ընդհանուր թուլություն: Այդ բոլորը վերաբերում է ստամոքսի և աղիքների, կամ, ինչպես ասում են, կերակրափողի միկրոբներով վարակվելուն:

Սակայն ինֆեկցիան կարող է փոքրահասակ յերեխաների սուր լուծ առաջացնել նաև ուրիշ ճանապարհով: Աղիքները, մանավանդ ծծկիր յեխայինը, զգալուն են այն բոլոր հիվանդությունների նկատմամբ, վորոնք առաջանում են միկրոբներից, իսկ միկրոբները որդանիզմի մեջ են ընկնում վոչ միայն կերակրափողի միջոցով: Առաջին տեղը պետք է դասել գրիպը, վորի ժամանակ, սկսած միայն հարուխով հիվանդանալու դեպքից և վերջացրած թոքերի բորբոքման դեպքերով, շատ հաճախ լուծ է նկատվում:

Ինչո՞ւ գրիպի ժամանակ փոքրահասակ յերեխաները կարող են ծանր տեսակի լուծով հիվանդանալ: Այդ հարցին շատ զգվար է ճիշտ պատասխան տալ: Գիտնականները ներկայումս ուսումնասիրում են այդ հարցը: Սակայն ինչպես ել վոր լինի, փաս-

տը մնում է վառար: Գրիպպի ժամանակ շատ հաճախ փոքրահասակ յերեխաները ծանր հիվանդանում են լուծով, վորը յերբեմն մահվան է հասցնում նրանց:

Այդ պատճառով շատ կարևոր է յերեխային պահպանել գրիպպից:

ԻՆՉՊԻՍԻ ԼՈՒԾԵՐՈՎ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Լուծերը տարբեր տեսակի յեն լինում: Լինում են թեթև և ծանր տեսակի լուծեր: Լինում է փսխոցով լուծ և առանց փսխոցի: Յերբեմն հիվանդությունն սկսվում է փսխոցով, իսկ վորոշ ժամանակից հետո յերեխան է գալիս նաև լուծը: Լինում են լորձով ու արյունով լուծեր:

Վորքան ավելի ամրակազմ է յերեխան, վորքան ավելի կանոնավոր են նրան կերակրում կրճքով, այնքան ավելի սաղավ է հիվանդանում, իսկ յեթե դերկերակրումից կամ կեղտոտված ուտելիքից հիվանդանում էլ է, ապա շատ հեշտությամբ է աանում հիվանդությունը և շատ-շուտ էլ կազդուրվում է:

Իհարկե, այդպիսի յերեխան ևս կարող է ծանր տեսակի լուծով հիվանդանալ: Բայց ամենից շատ լուծի յենթարկվում են ծծկեր և թույլ յերեխաները, մանավանդ այն յերեխաները, վորոնք արհեստական ձևով են կերակրվում և նրանք, վորոնք տրամադրված են ջրիկ կդանքին:

Պետք է տարբերել յերեխաների ամառային լուծի յերեք տեսակներ: 1) սուր, հասարակ լուծ կամ սուր դիսպեպսիա, 2) ծանր լուծ կամ տոքսիկ դիսպեպսիա և 3) լորձա-արյունախառն լուծ կամ արյունալուծ (դիզենտերիա):

Հասարակ լուծը կամ սուր դիսպեպսիան միանգամից է սկսվում: Որական մեկ կամ յերկու անգամի փոխարեն յերեխան կեղտոտում է 5-10 անգամ, իսկ յերբեմն էլ ավելի: Խիստ փոխվում է կղանքի տեսքը, դառնում է ջրալի, յերբեմն նրա մեջ շատ կանաչ և սպիտակ կտորներ են լինում: Շատ հաճախ կղանքը փրփրակալած է լինում: Յերեխան գունատվում է, քաշը պակասում: Աչքերը դառնում են թախծոտ, ախորժակը կորչում է: Յերբեմն դրան միանում է փսխոցը: Յերեխային տանջում են գաղերը: Ժամանակին միջոցներ ձեռք առնելու դեպքում այդ լուծը շատ շուտով անցնում է: Բայց յերբեմն հասարակ լուծը փոխվում է ծանր տեսակի, վորը

կայալած ե յերեսայի ամբողջ որգանիզմի ընդհանուր թունա-
վորման հետ:

Մանր լուծը կամ տոֆսիկ դիսպեպսիան շատ վը-
տանգավոր հիվանդություն ե ծծկեր և փոքրահասակ յերեսա-
ների համար: Իզուր չե, վոր նա «մանկական խոլերա» յե կոչ-
վում: Ծիշտ ե, սա իսկական խոլերա չե, վորը լինում ե համա-
ճարակների ժամանակ: Իսկական խոլերայով հիվանդանում են
միայն խոլերայի միկրոբներով վարակվելուց: «Մանկական խոլե-
րայի» ժամանակ խոլերայի միկրոբներ չկան, բայց իր վտանգա-
վորությամբ նա իսկական խոլերան ե հիշեցնում: «Մանկական խո-
լերան» սկզբում կարող ե շատ թեթեւ ընթանալ՝ փոքր լուծ,
յերբեմն փսխում, յերեսան դեմքով առանձնապես չի փոխվում,
միայն մի քիչ գունատվում ե: Բայց յեթե ժամանակին միջոց-
ներ ձեռք չառնվեն, դրությունը կվատթարանա և յերեսան կա-
րող ե մահանալ: Յերբեմն հիվանդությունը միանգամից ե սկսո-
վում՝ շատ փսխում ե, լուծում ե 4-6 ուր հետո յերեսան մա-
հանում ե:

Այդ ժամանակ խնչ ե կատարվում յերեսայի հետ:

Լուծը կրկնվում ե որական մինչե 20-30 անգամ, կղանքը
ջրիկ ե, յերբեմն գորշ դեղնավուն գույնի, շատ փաթիլներ կան,
շատ դարչափոս ե: Փսխումը հոճախակի, ինչ վոր ուտում, հետ ե
տալիս, նույնիսկ մի կում ջուրը փսխոց ե առաջացնում: Յերեսայի
դեմքը միանգամից փոխվում ե: Դիթը սրվում ե, դեմքը դեղ-
նում, աչքերի տակը մուգ շրջանակներ են գոյանում, աչքերը
փոս են ընկնում, դառնում պղտոր, թախծալի: Յերեսան հա-
ճախ հառում ե աչքերը, յերբեմն հայացքը յերկար ժամանակ
կանգ ե առնում վորեւ առարկայի վրա: Յեթե յերեսան յերկար
ե հիվանդանում, մաշկը, մանավանդ վորովայնի և ազդրերի
վրա, թառամում ե: Յերբեմն սա տալիս, կարծես փալաս լինի,
ծալքերով հավաքվում ե վորովայնի վրա—չի ուղղվում: Այս
նշանակում ե, վոր յերեսայի որգանիզմը շատ ջուր ե կորցրել:
Այդ ժամանակ ձեռներն ու վոտները սառչում են, վոտների
վրա հաճախ այտուցներ են յերեսան գալիս:

Այդ լուծերը տարբեր ընթացք են ունենում: Յերբեմն յե-
րեսան, հանկարծ թունավորվածի նման, շատ անհանգիստ ե,
նրա վախեցած աչիկները այս ու այն կողմն են վազում, սառ-
տիկ ճչում ե, ծանր ու խորը շնչում: Յեթե հիվանդությունը
միանգամից այդպիսի ծանր ձևով ե սկսվում, յերեսան կարող ե

շատ-շուտ, յերրորդ-չորրորդ որր մահանալ: Չնայած դրան, ժամանակին միջոցներ ձեռք առնելու գեպըում, կարելի չե փրկել յերեսային:

Շատ հաճախ այդ հիվանդությանը միանում են՝ միջին ափանջի բորբոքում, թոքերի բորբոքում, յերկամների ափազանների բորբոքում, աչքերի յեղջիւրնու վրա կարող են խոցիկներ գոյանալ, մաշկի վրա (աճուկներում, նստատեղի վրա) յերևան են գալիս շփաբորբ, յերեմն թարախակույտիւ: Այս ել ավելի չե քարդացնում առանց այն ել ծանր ու վտանգավոր հիվանդությունը և արագացնում յերեսայի կործանումը: Շատ հոգատարություն, աշխատանք, գիտելիք ու ժամանակ ե պահանջվում այդպիսի հիվանդին փրկելու համար: Յեթե յերեսայի առողջությունը գեպի լավն ե գնում, ապա ամենաքիչը մի ամիս ե պահանջվում, վորպեսզի նա վորք-ինչ ամրապնդվի: Այդ հիվանդությունից մեռնում ե հիվանդացած յերեսաների կեաը, իսկ յերեմն ել՝ ավելին:

Իսկ յերեմն ել այսպես ե լինում. վախոցը դադարում ե, իսկ լուծը դեռ շարունակվում ե: Յերեսան սաստիկ նիհարում ե, հյուծվում, դեմքի մաշկը կնճռոտվում ե, կերածը ոգուտ չի տալիս նրան: Այդպիսի դեպքերում հարկավոր ե յերկար ու համառորէն բուժել:

Լիճում եմ նայել լուծեր լորձով ու արշուճով: Ամենից հաճախ այդ արշուճալուծ ե (դիդենտերիա): Արշուճալուծն այնպիսի լուծ ե, վորն առաջանում ե հատուկ միկրոբներով: Իսկ թե ինչ բան ե միկրորը, մենք արդեն գիտենք: Յուրաքանչյուր հիվանդություն, մանավանդ վարակիչ, ունի իր միկրորը:

Լորձով ու արշուճով լուծի գեպըում հիվանդանում են, գլխավորապես, հաստ աղիքները. աղիքները բորբոքվում են, նրանց մեջ հաճախ խոցիկներ են առաջանում: Ուժեղ լուծի գեպըում յերեսայի աղիքը հաճախ դուրս ե գալիս հետանյքից: Յերեսան հաճախ ե ուզում դուրս գնալ, խիստ զոռ ե տալիս, իսկ կղանքը քիչ ե լինում. գալիս ե միայն լորձ, թարախ ու արշուճ: Այդ լուծերը կարող են ծանր, միջին ու թեթեւ ձևով ընթանալ:

Պատահում ե, վոր յերեսայի կղանքի մեջ արշուճ ե լինում, իսկ նա ուրախ ե, խաղում ե, ուտել ե ուզում: Յերեմն ել այդ լուծերն ընթանում են վորպես ծանր ու վարակիչ հիվանդություն: Յերեսան հյուծվում ե, նիհարում, աչքերը դառ-

նում են աղոտ, լեզուն փառակալած, շրթունքները՝ չոր, ճաք-
ճքված, մաշկի վրա թարախակույտեր են դոյանում և յերեխան
մահանում և:

Լորձային արյունոտ լուծը, կամ գլխուտերիան շատ վարակիչ
հիվանդութուն է: Բայց նրա վարակը ոգի միջով չի տարվում,
նա փոխանցվում է անմաքուր լվացած ձեռների միջոցով, այդ-
պիսի հիվանդի կղանքով կեղտոտված ուրիշի բարուրաշորերի
միջոցով:

Ամառ ժամանակ այդ վարակի փոխանցողները ճանճերն
են: Նստում և ճանճը հիվանդի կղանքի վրա, յեթե այն ժամա-
նակին դուրս չի տարված, կամ կեղտոտված բարուրաշորերի վրա,
վերցնում և վարակը և տեղից տեղ փոխանցում: Ճանճից նըս-
տում են դոմաղբի վրա, լինում են կեղտաջրի հորերում, դու-
գարաններում, միկրոբներ են հավաքում և նրանցով վարա-
կում կաթը, ջուրը և այլն: Այդ պատճառով ամեն կերպ պետք է
վոչնչացնել ճանճերին և նրանցից պաշտպանել յերեխայի ու-
տելիքն ու գեմքը (շրթունքները):

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ, ՅԵՐԲ ՅԵՐԵԽԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ Ե ԼՈՒԾՈՎ ՅԵՎ ՓՍՈՑՈՎ

Այդպիսի յերեխային հարկավոր է անմիջապես բժշկի
ցույց տալ: Յեթե մոտակայքում բժիշկ չկա, յեթե յերեխան
հիվանդացել է գիշերը կամ հիվանդանոցից հեռու գտնված
վայրում, ապա պետք է ձեռք առնել հետևյալ միջոցները:

Հենց վոր մայրը նկատում է յերեխայի լուծն ու փսխոցը
պետք է դադարել նրան կերակրելուց, 12 ժամ նույն իսկ կուրծք
չտալ նրան: Այդ բանը նրան միայն ոգուտ կրերի:

Այդ սովածության ժամանակ տալ միայն բաց թեյ և յե-
ռացրած ու պղած ջուր: Սաստիկ փսխոցի դեպքում ջուրը տալ
շատ սառը: Լցնել այն բաժակի կամ գավաթի մեջ և դնել սա-
ռուցող կամ ձյունով թափ մեջ. սառուց չլինելու դեպքում դնել
ուղղակի սառը ջրի մեջ, վորը շուտ-շուտ պետք է փոխել: Այդ-
պիսի յեթե տված ջուրը կամ թեյը պետք է մի քիչ քաղցրացնել
շաքարով և խմիչենի թեյի գդալով, փոքրիկ բաժիններով—1—2
թեյի գդալ ամեն մի 15—20 րոպեն մեկ:

12 ժամվա քաղցից հետո կարելի չե սկսել քիչ-քիչ կերա-
կրել յերեխային: Այն ծծկեր յերեխային, վորին մինչև հիվան-
դանալը կրծքով ելին կերակրում, պետք է քամած մայրակա-

կաթ տալ: Այդ դեպքում հարկավոր է նախապես ձեռները լվա-
նալ սապոնով, ոտներընրն ու պոտկները լվանալ յեռացրած
ջրով, մաքուր լվանալ բաժակը կամ գալաթը, հետո ողողել
յեռացրած ջրով և մաքուր ձեռներով կաթը կրծքից նրա մեջ
քամել: Սկզբում 2 ժամը մեկ անգամ տալ մեկ թեյի գդալ,
բացի դրանից կես ժամը մեկ տալ 3—5 թեյի գդալ յեփ տված
ջուր կամ բաց թեյ: Խիստ փսխոցի դեպքում կրծքի կաթը
նույնպես պետք է սառը վիճակում տալ: Սակայն ուշացնել չի
կարելի, հարկավոր է անպայման բժշկի գլխին:

Ինչպես վարվել այն ծծկեր յերեխայի հետ, վորի մայրը կաթ
չունի և յերեխան կովի կաթով եր կերակրվում: Միջոցները
նույնն են: Հինց վոր յերևան են գալիս լուծն ու փսխոցը, 12
ժամով դադարեցնել յերեխային կերակրելը և տալ յեփ տված
ջուր կամ թեյ: Գաղաթությունից հետո կարելի յե տալ բրնձի
խաշուկ շաքարով, 2 թեյի գդալ բրինձը յեփ տալ մեկ բաժակ
ջրի մեջ ալիքան, վոր ջրի կեսը մնա: ախուհետե ավելացնել
նույնքան յեռացրած ջուր և լցնել մաքուր մաղի մեջ. բրինձը
գդալով տրորել 3 անգամ, խաշուկին ավելացնել 1 թեյի
գդալ շաքար և սառը վիճակում, 2 ժամը մեկ՝ 2—3 թեյի
գդալ տալ յերեխային: Կարելի յե 2 ժամը մեկ տալ 1 թեյի գդալ
կես առ կես ջրի հետ խառնած կովի կաթ: Յերեխային պառկեցնել
մահճակալում, հատակին չիջեցնել նրան: Յիթե ոտով են յերե-
խայի ձեռներն ու վոտները, հարկավոր է նրանց վրա ջեռոց կամ
տաք ջրով շեր դնել: Անհրաժեշտ է շշերը փաթաթել բարու-
րաշորով կամ անձեռոցով և լավ խցկել խցանով, վոր յերեխան
չխաշվի:

Յերբնմն այս միջոցները միանգամից բարելավում են յե-
րեխայի դրությունը: Փսխոցը դադարում է, յերեխան ավելի յե
աշխուժանում: Բայց այդ դեպքում ևս հարկավոր է անպայման
բժշկի ցույց տալ: Վորքան շուտ նայի բժիշկը յերեխային, այն-
քան ավելի լավ է յերեխայի համար: Յիթե այդ հիվանդությունը
անուշադրության մատնվի թեկուզ 3—4 օրով, հետո դժվար կլի-
նի հաղթանարել նրան:

Ամառային լուծերը ծանր չարիք են ծծկեր յերեխաների
համար: Դժվար է պայքարել այդ արատի դեմ, յերբ նա արդեն
մտել է փոքրիկ որդանիցմի մեջ, ամենից ավելի հեշտ է կան-
խել այդ հիվանդությունը:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԾԿԵՐ ՈՒ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԼՈՒԾԵՐԻՑ

Մենք արդեն առել ենք, վոր ծծկեր յերեխայի համար ամենալավ սնունդը նրա մոր կաթն է։ Յեւ իրոք, կրճքով կերակրվող յերեխաներն ավելի լավ են զարգանում, ավելի առողջ, ավելի ամրակազմ են լինում, ավելի քիչ են հիվանդանում, քան արհեստական կերպով կերակրված յերեխաները։ Ի՞նչ է հետևում արանից։ Ահա թե ինչ։ Մինչև 6 ամսական հասակը յերեխային պետք է կերակրել միմիայն կրճքով, վոչ մի լրացուցիչ կեր չտալ։ Ուրիշ բան է, յեթե մոր կաթը քիչ է և յերեխան վատ է զարգանում։ Այն ժամանակ նրան պետք է լրացուցիչ կեր տալ նաև վեց ամսականից շուտ, Բայց ինչպես կերակրել, ի՞նչով և յերբ քիսել լրացուցիչ կեր տալ, այդ կարող է վորոշել միայն բժիշկը։ Առանց բժշկի հետ խորհրդակցելու, յերբեք չպիտի լրացուցիչ կեր տալ ծծկեր յերեխային։

Յերբեք չի կարելի ամուսնը կրճքից կտրել յերեխային։ Ավելի լավ է կերակրելը շարունակել ևս 2—3 ամիս, մինչև ցըրտերն ընկնիլը։

Կրճքով կերակրելու ժամանակ պետք է մաքրություն պահպանել։ Կերակրելուց առաջ յեռացրած սառը ջրով լվանալ ձեռները, պտուկները և պտուկների շուրջը։ Յերեխային կերակրել անպայման ժամերով, յուրաքանչյուր 3—3½ ժամը մեկ անգամ։ Գիշերը յերեխային չպիտք է կերակրել, յերեխայի ատամոքսը և աղիքները պետք է 6 ժամ հանգստանան։ Ձի կարելի յերեխային անկանոն կերակրել, կերակրել հենց վոր նա լաց է լինում։ Այդպիսով հեշտությամբ կարելի յե յերեխային դերկերակրել և փխոց ու լուծ առաջացնել։

Ե՛ւ ավելի շատ մաքրություն պետք է պահպանել արհեստական կերպով կերակրելու ժամանակ։ Յեթե մայրը ինքն է պատրաստում յերեխայի կաթը և վոչ թե կոնսուլտացիայից է վերցնում, շշերն առանձնապես մաքուր պիտք է լվանալ։ Կովի կաթն անպայման պետք է յեռացնել, յերբեք հում չտալ ա՛յն, վորովհետև հում կաթի մեջ բազմաթիվ միկրոբներ կան, իսկ միկրոբները լուծ են առաջացնում։ Կաթը պետք է պահել մաքուր ամանի մեջ, ամանն անպայման պետք է ծածկված լինի։ Կերակրելուց հետո ծծակը պետք է լվանալ տաք ջրով և պահել ծածկված մաքուր ամանի մեջ (պնակով ծածկված բաժակի կամ գավաթի մեջ)։

կաթը պետք է թարմ լինի, մանավանդ ամռանը: Ավելի լավ է կաթնախառնուրդները տանը չպատրաստել, այլ պատրաստի վիճակում բաժանել կոնսուլտացիայից: Բայց ամեն տեղ ել կոնսուլտացիաներ չկան, իսկ յեթե կան ել, ապա ամեն կոնսուլտացիային կից կաթնախոհանոց չկա: Այդպիսի դեպքերում մայրը կամ յերեխային խնամող անձնավորությունն ստիպված է ինքը պատրաստել խառնուրդը բժշկի կամ քրոջ ցուցումներով: Յերեխային յեղեք չպետք է տալ փչացած կամ քայքայվող ուտելիք, մանավանդ փչացած կաթ: Մրգեղենն անպայման պիտի լվանալ յեռացրած ջրով:

Մենք արդեն նշել ենք լուծերի պատճառներից մեկը — գերտաքացումը: Ամռանը յերեխային յերեքք արևի տակ չպետք է պահել, պետք է հրթիռակայլ նրա արևի տակ լինելը ստվերում լինելու հետ: Ամռանը յերեխայի հագուստը պետք է թեթև լինի: Յերեխան չպետք է քրտնի, ամեն որ գոլ ջրով վանանաներ պիտի անել, կամ ուղղակի փոքրիկ ցնցուղով գոլ ջուր լցնել նրա վրա: Այդ բանը հաճելի է ոգտակար է նրան: Այն սենյակը, վորտեղ գտնվում է յերեխան, շոգ չպետք է լինի: Ամառ ժամանակ լուսամուտներն ամբողջ ուր պետք է բաց պահել, իսկ վորպեսզի ճանճեր չմտնեն, լուսամուտները պիտի ծածկել մարլայով կամ մետաղե ցանցով: Յերեխան պետք է առանձին մահճակալի մեջ քնի: Նրա սպիտակեղենը միշտ պետք է մաքուր ու թարմ լինի: Մաքրությունը, թարմ ողը, լավ խնամքը և կանոնավոր կերակրելը կպաշտպանեն յերեխային շատ հիվանդություններից, այդ թվում նաև լուծերից:

Ամեն ինչում պետք է մաքրություն պահպանել. յերեխային չմոտենալ կեղտոտ ձեռներով, այն սենյակում, վորտեղ գտնվում է յերեխան, հատակն ու բոլոր իրերը պիտի մաքրել խոնավ շորով, վորպեսզի նրանց վրա փոշի չմնա, չթքել հատակին, փշրանքները հավաքել սեղանից, աթոռներից, նստարաններից, հատակից:

Այն սենյակը, վորտեղ գտնվում է յերեխան, յեթե մաքուր լինի, աջնտեղ ավելի քիչ միկրոբներ կլինեն: Միկրոբները զրանվում են գլխավորապես փոշու և կեղտի մեջ: Այդպիսի կեղտն ընկնում է ուտելիքի մեջ, այնտեղ մեծ քանակությամբ միկրոբներ են զարգանում և յերեխան այն ուտելով, հիվանդանում է լուծով:

Մենք արդեն ասել ենք, թե ինչ ֆլաթ են տալիս ճանճերը:

Վերադարձի ճանճեր առաջ չգան, հացի վշրանքները չպետք է թողնել սեղանին. շաքարը, մուրաբան, մեղր և այլն պետք է խնամքով ծածկված լինեն և ճանճերի համար անմատչելի: Բացի դրանից, անհրաժեշտ է կախել ճանճերի դեմ հատուկ կաշույն թուղթ:

Հատուկ նախազգուշական միջոցներ պետք է ձեռք առնել ընտանիքի անդամներից վորեւ մեկի լուծով հիվանդանալու դեպքում, մանավանդ յեթե հիվանդութունն ուղեկցվում է լորձով ու արյունով: Փոքրիկ յերեխաներին չպետք է թույլ տալ, վոր մոտենան այդպիսի հիվանդի և չթողնել, վոր նա ողտվի այն պետքանոթից, վորից ողտվում է հիվանդը:

Յեթե լուծով հիվանդանում է յերեխային կրծքով կերակրող մայրը, նա պետք է պահպանի հետևյալ կանոնները՝ 1) կերակրելուց առաջ խնամքով լվանա իր ձեռները տաք ջրով, սապոնով ու խոզանակով, 2) լվացվելուց հետո, ինչպես հարկն է, ձեռները տրորել սպիրտի, կամ ողու մեջ թրջված բամբակով, կամ թե ձեռները լվանալ ուժեղ կերպով ջրի հետ բացած նաշադրի սպիրտով (1 գդալ նաշադրի սպիրտ մեկ բաժակ ջրին), 3) նախքան յերեխային կուրծք տալը պտուկները լվանալ յուացրած ջրի մեջ թրջած բամբակով, 4) ամեն անգամ դուրս գնալուց հետո վերը ցույց տված ձևով խնամքով լվանալ իր ձեռները:

Վոչ վորքի չպետք է թույլ տալ, վոր չլվացած ձեռներով մոտենա յերեխային, մանավանդ այնպիսի անձանց, վորոնք իրենք հիվանդ են լուծով. այդ անձինք կարող են վարակել յերեխային: Յերբմն պատահում է, յերա վորեւ մեծ մարդ կամ յերեխա հիվանդ է թեթե տեսակի լուծով, իսկ այն յերեխան, վորին մոտեցել են այդ հիվանդները կամ գրկել չլվացած ձեռներով, շատ ծանր է հիվանդանում, դիտակցության կորուսումով, զանազան բարդություններով, ինչպես միջին ականջի բորբոքումը, թոքերի բորբոքումը և այլն:

Այդ բարդություններն ավելի յեն վատացնում յերեխայի առանց այն ել ծանր դրությունը, լուծը ծառականում է, որգանիզմից օկսում է անհետանալ ջուրը, յերեխան շատ շուտ ճգամաքում է, թուլանում է նրա սիրտը և գործը կարող է մահով վերջանալ:

Վոչ մի դեպքում տարբեր յերեխաների միևնույն բարուբաշորով չմաքրել նրանց դուրս գնալուց հետո: Լուծով հիվանդ յերեխան պետք է ունենա իր առանձին սպիտակեղենը, անկողինը և ամանները: Այս կանոնները կատարելու դեպքում կա-

ընդի յե ընտանիքում յեղած մյուս յերեխաներին պաշտպանել ծանր հիվանդանալուց:

Մենք վերն առացինք, վոր գրիպպը կարող ե փոքրահասակ յերեխաների մոտ ծանր լուծ առաջացնել: Այդ պատճառով յերեխաներին պետք ե պաշտպանել ամեն տեսակի վարակիչ հիվանդություններից, և մանավանդ գրիպպից:

Վոչ վորի թույլ չտաք համբուրել ձեր յերեխաներին և ինքներդ ել չհամբուրեք նրանց շրթունքները: Յեթե դուք նույնիսկ փոքրիկ հարուխ ունեք, ավելորդ տեղը չմոտենաք յերեխային: Իսկ յեթե հարկավոր ե մոտենալ յերեխային կրճքով կերակրելու, բարուրաշրերը փոխելու կամ լողացնելու համար, ապա հարբուխ ունենալու դեպքում, յերեսներդ մարլայե կապ դրեք, այնպես, վոր նա ծածկի ձեր քիթն ու բերանը: Յերբեք չհաղաք ու չփոշաք յերեխայի դեմքին: Յեթե հարբուխի հետ ձեր ջերմաստիճանն ել ե բարձրացել, այս կանոններն առանձնահատուկ ուշադրությամբ պահպանեցեք:

Չպետք ե մոռանալ, վոր ամռանը յերեխան ծառավում ե: Յերեխային պետք ե յեռացրած թուր ջուր խմացնել, հուլիս չդնելով, թե մոր կամ կովի կաթը կհագեցնեն նրա ծառավը. պետք ե հիշել, վոր յերեխայի համար կաթը ուտելիք ե և վոչ թե խմելիք:

Ամառային լուծերի դեմ պայքարի գործում խոշորագույն ազուտ են տալիս մսուրները՝ քաղաքներում, կոլտնտեսություններում և խորհրդատեսություններում: Ահհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուր բանվոր, բանվորուհի, կոլտնտեսական և կոլտնտեսուհի հասկանա մսուրների ամբողջ նշանակությունն ու ոգուտը:

Մանուկների մահացության և մանավանդ ամառային լուծերի դեմ մղվող պայքարում մսուրներն արդեն շատ բան են արել և կարող են ել ավելի շատ անել: Այն ուժիմը, վոր անց ե կացվում մսուրներում՝ մաքրություն պահպանելը, զրոսանքը թարմ ոգում, կանոնավոր սնումը, այդ ամենը յերեխային առողջացնում են և վորքան ավելի ամուր ե նրա որդանիղմը, այնքան ավելի քիչ ե նա յենթակա ամեն տեսակի հիվանդությունների, այդ թվում նաև ամառային լուծերի: Յուրաքանչյուր խորհրդատեսության, կոլտնտեսության մեջ անպայման պետք ե մսուր լինի, չխոսելով արդեն արդյունաբերական կենտրոնների մասին: Վորքան ավելի շատ բացվին լավ մսուրներ, այնքան ավելի քիչ յերեխաներ կմեռնեն լուծերից և ուրիշ հիվանդություններից:


Ահժ ոգուտ և բերում նաև մայրության ու մանկության պահպանության կոնսուլտացիաների կարգավորված աշխատանքը քաղաքում և գյուղում: Անհրաժեշտ և սիրտ կապ պահել իր կոնսուլտացիայի հետ, կանոնավոր կերպով յերեխային տանել բժշկի մոտ, ճշտությամբ կատարել յերեխային խնամելու վերաբերյալ կոնսուլտացիայի բժշկի և քույր բոլոր խորհուրդները, յերեխայի հիվանդանալու առաջին նշանների դեպքում անմիջապես տեղեկացնել կոնսուլտացիային և հիվանդ յերեխային տանել բժշկի մոտ:

Ներկայումս, յիրք մեր յերկրի բնակչությունն այնպես արագ կերպով է ավելանում, մոտերների ու կոնսուլտացիաների նշանակութունն առանձնապես բարձրանում է: Կուսակցությունն ու կառավարությունը հսկայական ուշադրություն են հատկացնում մանկական հիմնարկներին, մեծ հոգատարությամբ են շրջապատում փոքրիկ քաղաքացիներին, կոմսենիվմի ապագա կառուցողներին: Որեցոր ավելանում է մոտերների թիվը քաղաքներում, կոլտնտեսություններում և խորհրտնտեսություններում:

Այս բոլորի հետ միասին անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր մայր շատ կարգա յերեխաներին խնամելու վերաբերյալ ոգտակար գրքեր, իսկ յեթե յերեխայի մայրն անգրագետ է կամ կիսագրագետ, նա պետք է շատ շուտ վերացնի այդ թերությունը: Ապացուցված է, վոր գրագետ մայրերի յերեխաներն ավելի քիչ են մեռնում, քան անգրագետներինը: Այդ հասկանալի յե. գրագետ մայրը կարող է կարդալ ամեն մի ոգտակար գիրք և ավելի շուտ կհասկանա, թե ինչ ասաց իրեն բժիշկը:

Խորհրդային յերկրում ստեղծված են բոլոր պայմանները մի շարք ծանր հիվանդությունների, այդ թվում նաև ամառային մանկական լուծերի դեմ հաջողությամբ պայքարելու համար: Առողջ և լուսավոր բնակարանների լաւ շինարարությունը, մի շարք խոշոր քաղաքների վերակառուցումը, կոլտնտեսային կարգերի ամրապնդումը գյուղում, քաղաքային և գյուղական բնակչության կուլտուրական աճը—այս բոլորն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ լաւ առողջապահական միջոցառումներ անցկացնելու համար:

Հենվելով մեր հայրենիքի բոլոր նվաճումների վրա, անգաղղում կերպով բարձրացնելով իրենց կուլտուրական մակարդակը, մեր յերկրի աշխատավորները կարող են ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել և պետք է վերացնեն անցյալի ծանր ժառանգությունը—մանուկների բնահրդուլությունն ամառային լուծերից:



Պատմագիր՝
ԲՃ. Ս. Հ ա Ր Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն Յ Ա Ն
Տեխ. խմբ. գիր՝
ԱՆ. Գ ա ս պ ա Ր Յ Ա Ն
Սրբագրիչ՝
Մ. Թ ո լ մ ա Ն Յ Ա Ն

Գլավելիտի լիազոր՝ Բ—1156. Հրատ. 5209.

Պատվեր 278. Տիրած 2000.

Հանձնված է արտադրության 25/III 1940 թ.

Ստորագրված է տպագրության 26/IV 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերեան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0029365

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

A $\frac{\bar{11}}{1715}$

Д-Р М. И. НЕЙШТАДТ
ЛЕТНИЕ ДЕТСКИЕ ПОНОСЫ
И
БОРЬБА С НИМИ
Армгиз, Ереван, 1940 г.